«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ *Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում*

Հաստատություն ՝ *Արագածոտնի մարզի << Աշտարակի համայնքի Ուջանի թիվ 16 Հովիտ մանկապարտեզ>> ՀՈԱԿ*

Դաստիարակ ՝ Նաիրի Պետրոսյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1 . Ազգային Տոներ և ծեսեր 4
1.2 Սուրբ Զատիկ **..... 6**
Գլուխ 2 8
2.1 Պարապմունքի պլան 8
Եզրակացություն 17
Գրականության ցանկ 18

Ներածություն

Ընտրելով «Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում» թեման, ցանկացել եմ ընդգծել դրա արդիականությունը և կարևորությունը: Հայ հասարակության համար կարևորագույն խնդիրներից է, բարոյական նորմերի ճիշտ արժևորումը և նոր սերունդների դաստիրակության գործում դրանց կիրառումը:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է ուսումնասիրել ազգային տոներն ու ծեսերը, դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում:

Յուրաքանցուր մանկավարժ, ով մուտք է գործում կրթական համակարգ, ունի կարևոր ու վեհ առաքելություն՝ այն է կրթելու և դաստիրակելու հայրենիքին արժանի, բարոյական, ազգային և ավանդական արժեքները բարձր պահող սերունդ: Յուրաքանչյուր երեխայի մեջ պետք է սերմանել սեր հարազատ ծննդավայրի, հայրենի բնության, հասակակից ընկերների, այնուհետ հայրենիքի և սեփական ազգի նկատմամբ: Երեխային դեռ վաղ մանկուց պետք է հասցնել այն գիտակցության, որ ազգը և հայրենիքը սկսվում է իրենից և իր հայրենի բնօրրանից: Ապրելով մեր հայրենիքի և ազգի համար թերևս պատմական ծանր շրջանում, երեխայի հայեցի դաստիրակության հարցը դարձել է գերխնդիր հայ մանկավարժի և ծնողի համար: Այս ամենը երեխաներին ծանոթացնելու և հաղորդակից դարձնելու լավագույն մեթոդը մանկապարտեզնորում ազգային տոների և ծեսերի կազմակերպումը և անցկացումն է: Դրանք օգտակար և կարևոր են երեխայի արժեհամակարգի, ազգային մտածելակերպի, հոգևոր և բարոյական ներաշխարհի ճիշտ ձևավորման համար: Անձի բազմակողմանի կազմավորման և զարգացման համար կարևոր է նրա արժեհամակարգում բարոյական, գեղագիտական, հոգևոր, մշակութային արժեքների ընկալումը: Քանի որ աճող սերնդի դաստիրակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ըբտանեկան և այլ, մանկավարժության համար խնդիր է դառնում, երեխաների ազգային գիտակցության

ձևավորումը՝ սեփական ժողովրդի պատմության ու մշակութային հենքի վրա։ Ազգային արժեք են իհարկե, ազգային տոներն ու ծեսերը։

Գլուխ 1. Ազգային Տոներ ու Ծեսեր

Մանկապարտեզը հանդիսանալով կրթական համակարգի առաջին օղակը՝ հենց այստեղից էլ սկսվում է մանկական աշխարհաճանաչմանուղղված տարրական գիտելիքների յուրացումը։ Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի նկատմամբ։ Հայ մանկան մեջ պետք է սերմանել , մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները։ Երեխայի բարության ու առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցմն է։ Հայ ազգային մշակույթը պետք է պահպանվի և փոխանցվի սերնդեսերունդ։ Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ազգային տոները և ծեսերը։ Հայոց ազգային տոներն ու ծեսերը տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ են ունեցել։ Սակայն այդ տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրա վրա։ Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս հեթանոսական ժամանակներից։ Հայ ազգային տոները ունեն ծիսական արարողակարգ։ Այդ տոներից են՝ Նոր տարին, Սուրբ ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Սուրբ Զատիկը, Համբարձումը, Վարդավառը։

Մեր տոների ժողովրդական կատարումների զգալի մասը վկայում է, որ ժողովուրդը տոներին ի ցույց է դրել մարդու և բնության ամբողջականությունը, փոխկապակցվածությունը, միասնականությունը և տարբեր ձևերով միմյանց օգնելու ներդաշնակ կապը։

Տոնը, թերևս , մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողականն է ազգային արժեքների պահպանման գործում։ Տոնը ներկայացում չէ։ Այն կատարողներ և հանդիսատես չունի։ Տոնի ընթացքում բոլորը մասնակիցներ, բոլորը կատարողներ են և ուրեմն՝ մշակույթի ազգային արժեքների հաղորդակիցը ։

Հայոց տոները շատ հարուստ երգեր ու պարեր ունեն։ Տոնական հանդիսության անքակտելի մաս են կազմել խաղերը։ Մշակույթը չէր պահպանվի և սերունդներին չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրանց նպաստող որոշակի միջոցներ, որոնցից են՝ պատմության ընթացքում ձևավորված ծեսերը։

Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական կրոնական արարողություն, որին հավատացյալները վերագրում են մոգական հատկություններ։ Ծեսը լայն տարածում ունի կրոնում և մեր կենցաղում։ Ծեսը խորհրդանշական ձևով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը։

Մարդիք այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին անձրևաբեր և անձրևափախան ծեսեր՝ որպեսզի կարողանային ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները։ «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործողության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ։

Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող։

Երեխաների գեղագիտական և քրիստոնեական դաստիրակության գործում անգնահատելի նշանակություն ունեն ընտանեկան, ժողովրդական, ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները։ Դրանք հոգեհարազատ են երեխաներին, քանի որ այս դեպքում նրանք դառնում են մասնակից և կատարող։

Այս հետազոտական աշխատանքում կներկայացնեմ «Սուրբ Զատիկ» -ի տոնական հանդիսության անցկացումը մեր մանկապարտեզում։

1.2 Սուրբ Զատիկ

Սուրբ Զատիկ կամ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարություն տոն, քրիստոնյա եկեղեցիների , այդ թվում նաև Հայ Առաքելական եկեղեցու հնագույն տոն, հինգ տաղավար տոներից մեկը: Զատիկի տոնը սկիզբ է առնում հրեաների կողմից այսօր նշվող Պասեք տոնից, որի ժամանակ ըստ քրիստոնեական դավանանքի 1-ին դարում Երուսաղեմում խաչվել և հարություն է առել Հիսուս Քրիստոսը: Համաձայն քրիստոնեական ուսմունքի՝ հիսուս Քրիստոսը Աստծո Որսին իր արյունը հեղեց աշխարհի և մեղավոր մարդկանց փրկության համար:

Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ և ամենասպասված տոնն է: Այն շարժական տոն է, հայ առաքելական եկեղեցին այն նշում է գարնան գիշերահավասարին հաջորդող լիալուսնի առաջին կիրակի օրը, որը ընկնում է մարտի 21-ից մինչև ապրիլի 25-ը, 35 օրերի միջակայքում:

Տոնի առաջին խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառը այստեղ խորհրդանշում է, ոչ միայն տարվա եղանակների, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուր գորշությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով:

Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստը ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն ձմռան երկար թագավորությունից բմության ազատվելուց, այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստությունից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասնօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից:

Զատկին նախորդում է Ավագ շաբաթը: Զատկի հետ առնչվեղ գլխավոր արարողությունները սկսվում են Ավագ շաբաթվա շաբաթ օրը և ավարտվում երկուշաբթի օրը: Շաբաթ երեկոյան մատուցվում է Քրիստոսի հարության ճրագալույս պատարագ, որով վերջանում է Զատկին նախորդած՝ յոթ շաբաթ տևած Մեծ Պասի

շրջանը: Պատարագի ավարտին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոսի հարյավ ի մեռելոց» պատասխանը:
Հայ ժողովուրդը այս տոնը կոչում է նաև Ուրախ Զատիկ, քանի որ այն նշվել է ավանդական, ազգային երգ ու պարով և զանազան ծիսական խաղերով, որին մասնակից են եղել, թե՛ փոքրերը և թե՛ մեծերը: Պատրաստել են ցազմաթիվ տոնական ուտեստներ և կարմիր ներկել ձուն: Զուն օրինակ է աշխարհի,դրսից կեղևը՝ նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցը էլ երկիրն է: Կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը փրկվեց Քրիստոսի արյամբ, և մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը: Ստորև կներկայացնեմ Զատկի թեմայով ինտերգրված պարապմունքի նմուշօրինակը:
Նախադպրոցական կրթության կարևոր նպատակներից է երեխաների մեջ սերմանել և մշակել այնպիսի որակներ և հատկություններ, ինչպիսիք են՝ քննադատական մտածողությունը, հետաքրքրությունը, անմիջականությունը, զարմանքը, երևակայությունը և աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու ունակությունը: Մանկապարտեզի բովանդակալից առօրյան պետք է նպաստի, որ երեխաները դառնան անմիջական շփվող ու բարի անհատականություններ: Այս ամենին հասնելու լավագույն, միջոցը մանկապարտեզի ուսումնական գործընթացը, թեմատիկ պարապմունքների միջոցով կազմակերպելն է:
Ուսումնական մեթոդները տարեցտարի կատարելագործվելով, ավանդականին փոխարինում է ժամանակակից ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներով, որոնց կիրառումն ավելի արդյունավետ է դառնում հատկապես ինտեգրված պարապմունքներ կազմակերպելիս: Ինտեգրված պարապմունքների արդյունավետության ցուցանիշներից մեկն այն է, որ բոլոր երեխաները այդ ժամանակ դառնում են գործուն և յուրաքանցյուրը զբաղվում է իր առանձնահատկություններին համապատասխանող և իր համար նախընտրելի աշխատանքով:
Այսպիսով մեր ցերեկույթը յուրովի ինտեգրված պարապմունք է, որի ժամանակ երեխաներից յուրանքանչյուրը ներկայանում է , իր հնարավորությունների և կարողությունների դաշտում: Այստեղ բացառվում է մի երեխայի գերակայությունը մյուսից, և ապահովվում է բոլոր երեխաների լիարժեք մասնակցությունը տոնական միջոցառմանը:

Գլուխ 2.

2.1 Պարապմունքի պլան

Խումբ. Միջին խումբ (4-5 տարեկան) 30 երեխա

Թեմա. Սուրբ Զատիկ

Ամեն տարի Գարնանը սուրբ Զատիկի տոնը մեր մանկապարտեզում վերածվում է շքեղ հանդիսության: Այն նշվում է յուրահատուկ խանդավառությամբ և հավատով: Այն հայեցի դաստիրակության հիանալի օրինակ է:

Տոնական ցերեկույթը կազմակերպելիս պետք է պահպանել ծիսակարգը և երեխաներին ընկալելի դարձնել դրա բովանդակությունը և աստվածային խորհուրդը: Կարևորագույն պայմաններից մեկն էլ այն է, որ պետք է հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները, մշակելով մատչելի և հասանելի պլան: Այդ ուղղությամբ կարևոր աշխատանք է, թեմայի նախնական պլանավորումը և պարապմունքների անցկացումը:Իսկ պարապմունքի տեխնոլոգիական խնդրի հաջող լուծումը պայմանավորված է, ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիրակը, հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական հոգեբանական առանձնահատկությունները և կարիքները:

Տեսակը. Ինտեգրված, Խոսքի զարգացում + երաժշտություն + պար + թատերական ներկայացում + խաղ

Նպատակը.

- Երեխաներին հաղորդել գիտելիքներ ազգային և կրոնական ծեսերի մասին:
- Զարգացնել թիմային և զույգերով աշխատելու կարողությունները, սովորեցնել խմբային աշխատանքի պարզ կանոնները:
- Սովորեցնել ընկերոջ խոսքը լսելու, և նրան շարունակելու կարողությունը
- Հարստացնել բառապաշարը, նոր բառերով ու բառակապակցություններով:

- Ծանոթացնել ազգային երգին ու պարին, խթանել ավանդական ծեսերին մասնակցելու հետաքրքրությունն ու ցանկությունը:
- Սովորեցնել Տերունական աղոթք:

Նախապատրաստական աշխատանքներ

Նախորդ պարապմունքների ընթացքում աշխատանքները կատարվել են զատկական թեմաներով: Ապլիկացիայի պարապմունքներին պատրաստել ենք թղթե բացիկն, ճուտիկներ և զատիկներ: Ծեփակերտման պարապմունքին պլաստիրինից և խմորից ծեփել ենք գունագեղ հավկիթներ: Սկուտեղների վրա ցանել ենք ածիկի ցորենն ու գարին: Երեխաները սովորել են զատկական հանելուկներ, խաղիկներ, ասացվածքներ, բանաստեղծություններ և ավանդական որգեր: Երեխաների հետ պատրաստելե ենք Զատիկի ծիսական տիկնիկ՝ Ակլատիզը:

Անհրաժեշտ պարագաներ՝

Դահլիճի կենտրոնում դրված է մեծ սեղան, որը լցված է զատկական ուտելիքներով՝ հալվա, գաթա,փոխինդ, ներկած հավկիթնոր, չամչով փլավ և այլ ավանդական ուտելիքներ, որոնց պատրաստման հարցում մեզ օգնում են երեխաների ծնողները: Սեղանը զարդարված է նաև ուռենու ճյուղերով, ցորենի և գարու կանաչ ծիլերով, մոմերով և ցանկությունների ծառով





Ընթացքը.

Տոնական ծիսակատարությունը կազմակերպվում է դահլիճում, որին մասնակից է լինումմանկապարտեզի ողջ անձնակազմը: Տոնական միջոցառման մեկնարկը տրվում է Տերունական աղոթքով:

Դաստիրակ.

Սիրելի փոքրիկներ Սուրբ զատիկը ուրախության տոն է: Հոգևոր գրականության մեջ այն կոչվում է նաև << Հրաշափառ հարության տոն>> կամ << Լուսավոր զատկի տոն>> : Քրիստոնեական եկեղեցու այս մեծագույն տոնը խորհրդանշում է, Հիսուս քրիստոսի հայտնությունը: Զատիկի տոնակատարությունը իր մեջ ամփոփում է ազգային գեղեցիկ սովորույթներ, կենցաղային ավանդույթներ:Այդ օրը մեր ընտանիքներում պատրաստում ենք զուտ հայկական ուտեստներ: Հմչում է դաշնամուրի երաժշտություն և երեխաները երգում են Քրիստոսի հրաշափառ հարությանը նվիրված երգը:

Երեխաներ. Սքանչելի լուր է հնչում

Քրիստոս հարիավ են գոչում

Քրիստոս հարյավ են
Երգում, գովերգում
Քրիստոս հարյավ ավետում։

Երեխաներից երեքը՝ ովքեր կերպարանավորում են Քրիստոսի հարության լուրն ավետող հրեշտակներին, առաջ են գալիս և արտասանում են.

Հողմը փլեց ի հարավեն,
Ազատվեցին դաշտքը ձյուներեն,
Բերկրություն է ամեն տղոց,
Քրիստոս հարյավ ի մեռելոց։

Առուները խոխոջացին
Ծառերն ահա բողբոջեցին,
Օդը լի է ձայնով թռչնոց
Քրիստոս հարյավ ի մեռելոց։

Դաստիրակ.
Երեխանե՛ր Զատիկի խորհրդանիշներից մեկը՝ Ծիսական ծառն է, որը խորհրդանշում է անցյալը, ներկան և ապագան։ Այս ծառից նախկինում կախվել են ձեռագործ հավկիթներ, իսկ այսօր դուք այն զարդարել եք ձեր աշխատանքներով։ Ցորենի ծիլերը՝ խորհրդանշում ոն մեռնող և հարություն առնող բնությունը (ցորենը ցանում են մեռնում է՝ ծիլ է տալիս վերակենդանանում է)։ Ցորենի ծիլերը կոչվում է ածիկ։ Հաջորդ խորհրդանիշները ծիսական տիկնիկներն են՝ Ակլատիզը և Ուտիս տատը։ Այդ տիկնիկները մարդիկ պատրաստում էին հավի պոչի յոթ փետուրներից, այն խրելով գլուխ սոխի մեջ, և յոթ գույն թելերի հյուսքով կախում երդիկից։ Ակլատիզը հսկում էր պասի պահպանությունը, իսկ Ուտիս տատը խանգարում էր նրան։ Ու քանի որ մեծ պասի շրջանը կազմում էր յոթ շաբաթ, յուրաքանչյուր շաբաթվա կիրակի օրը, ընտանիքի ավագը Ակլատիզի վրայից պոկում է մեկական փոտուր և գցում թոնիրը։

Յոթ երեխա մոտենում է սեղանին դրված Ակլատիզին։ Նրանցից յուրաքանչյուրը՝ ասելով պահքի շրջանի ամեն մի կիրակի օրվա անվանում, պոկում է մեկական փետուր

Երեխաներ.

1. Բուն Բարեկենդան
2. Անառակ որդու կիրակի
3. Արտաքսման կիրակի
4. Անիրավ տնտեսի կիրակի
5. Անիրավ դատավորի կիրակի
6. Գալստյան կիրակի
7. Ծաղկազարդ

Աշխուժացնող խաղ

Երեխաները կծկված կքանստում են իրենց աթոռակների դիմաց

Դաստիրակը արտասանում է

- Ձվիկ – ձվիկ, ձվեղեն,
Դե, կոտրվիր կեղևեն
Որ դուրս ելնի քո ներսից
Փոքրիկ ճուտիկը դեղին։

Երեխաները աշարժացած վիճակից սկսում են ճուտիկների նման թափահարել թևերը, շրջել և ծվծվալ։

Դաստիրակ. - Դե՛ ճուտիկներ իմ սիրուն,
Մնացեք դուք ձեր բակում,
Թե չէ փիսոն փողոցեն,
- Մյաու – մյաու, մյաու

Երեխաները խուճապահար փախչում են իրենց տեղերը։

Դաստիրակ.

- Երեխաներ՛, Մեծ պահքը ավարտվում է նավակատիքի ընթրիքով , որի ավանդական ուտեստներն են հավկիթը, ձուկը, չամչով փլավը, իսկ ըմպելիքը՝ գինին։ Հիմա դուք ձեր խմբերով կներկայացնեք և կպատմեք, թե մայրիկներն ու տատիկները, ի՞նչ ավանդական ուտեստներ են պատրաստում Զատիկի տոնին։

Երեխաները բաժանվում են խմբերի և յուրաքանչյուր խմբից մեկ երեխա ներկայացնում է, իրոնց տանը պատրաստվող ուտեստների տեսակները։

օրինակ՝ Չամչով փլավ

Դաստիրակ.

- Երեխանե՛ր, բրնձով չամչով փլավը տոնական սեղանի զարդն է։ Չամիչը խորհրդանշում է աշխարհի քրիստոնյաներին, իսկ բրինձը համայն մարդկության։ Այդ ընթացքում խոհարարը և դաստիրակի օգնականը ներս են բերում նոր եփված չամչով փլավը։

Երեխա . Զմեռն անցավ, եկավ գարուն,
Պասը գնաց, Ուտիսն եկավ,
Քաշվի՛, կորի՛, Զատիկն եկավ։

Հնչում է երաժշտությունը, երգում են երեխաները

Երգ « Չամչով փլավ »

1. Տատիկ, տատիկ,
Մեր մի հատիկ,
Բրինձ լավ,
Փլավ արա

2. Լավ ես եփում
Բոլորից լավ,
Հենց մեր սիրած
Չամչով փլավ

Աղջիկներից մեկը, ով կերպարանվորում է Ուտիս տատին, վերցնում է կավե ամանի

մեջ լցված չամչով փլավը, պտտվում նրանց առջևով և երգում է, ի պատասխան թոռնիկների

3. Իմ թոռնիկներ	4. Անուշ արեք
Խոլոք ու լավ	Հատ-հատ ու լավ
Հիմա բերեմ	Հենց ձեր սիրած
Տաք – տաք փլավ	Չամչով փլավ

Այս երգի բեմականացումը մեծ աշխուժություն և ուրախություն է մտցնում երեխաների մեջ։

Երեխաների հաջորդ խումբը ներկայացնում է զատկական ավանդական քաղցրավենիքների շարքը, որը հենց իրենց մայրիկներն են պատրաստել և բերել մանկապարտեզ, ինչի պատրաստման ընթացքին մասնակից են եղել փոքրիկները։ Դրանք են՝ բաղարջը, գաթան, փոխինդե քաղցր գնդիկները, հալվան, հյուսված կաթնահունցը։

Տղաներից մեկը ներկած հավկիթները զամբյուղը ձեռքին առաջ է գալիս և ասում է.

- Բերեցի՛, Զատիկի ձվերը բերեցի

Տեսեք որքան գեղեցիկ են Զատկի ձվերը։

Դաստիրակ

- Երեխանե՛ր ձու ներկելը խիստ կարևոր ավանդույթ է Զատկի տոնին։ Ձուն ներկում են սոխի կճեպներով կամ տորոն բույսի արմատներով։ Ինչպես գիտեք տորոնի արմատներով ձու ներկելը՝ մեր գյուղին բնորոշ ավանդույթներից մեկն է։ Կան շատ լեգենդներ, որոնք բացատրում են ձու ներկելու խորհուրդը։ Հիմա ձեզ կպատմեմ դրանցից մեկը։

Ասում են, երբ Հիսուսը փոքր էր, սիրում էր խաղալ հավերի հետ, և կերակրել նրանց։ Աստվածամայրը ձվերը նկարազարդում էր, և որպես խաղալիք տալիս մանուկ Հիսուսին։ Տարիներ անց երբ Հիսուսին դատում են, Մարիամը գնում է Պիղատոսի մոտ, որ հանդարտեցնի նրան, ու իր հետ տանում է գոգնոցի մեջ թաքցրած ներկած ձվեր։ Երբ նա խոնարհվում է Պիղատոսի առաջ գունավոր ձվերը թափվում են գոգնոցից և գլորվում ամբողջ աշխարհով մեկ։

Սիրելի փոքրիկներ Զատկի տոնին բոլորը խաղացել են ծիսական խաղեր և ձվախաղեր։

Ծիսական խաղեր

1. Անհաղթ աքլոր։ Գծում են շրջան, որի մեջ « աքլորները», մեկ ոտքի վրա ցատկոտելով կռվելու են՝ ուսով դիմացինին հրելով։ Նրանցից մեկը մյուսին շրջանից դուրս է հանում։

Ցանկալի է մյուս ոտքը գետնին չհպել, բայց փոքրերի դեպքում, կարելի է հոգնած ոտքը փոխել։ Հերթով խաղում են ցանկացողները։ Պարտվողներ չկան, կա միայն ուրախ խաղ։ Դիտողները կողքից վանկարկում են.

- Տիկ-տիկ-տիկ, գարի կտանք
ցորեն կտանք,
-Տիկ-տիկ-տիկ, գարի կտանք
ցորեն կտանք։

2. Խնոցի հա հարեմ (ավագ շաբաթվա ծիսական խաղ)

Խաղում ոն զույգերով։Երեխաներից մեկը թեթևակի շալակում է մյուսին ու գոտկատեղից վերև ընկած հատվածով ռիթմիկ առաջ ու հետ շարժում կատարելով, ասում.

Խնոցին հա հարեմ
Շալակեմ՝ սար հանեմ։
Խնոցին հա հարեմ,
Շալակեմ՝ գետն անցնեմ։
Խնոցին հա հարեմ,
Շալակեմ՝ դաշտ տանեմ,
Խնոցին հա հարեմ
Կաթ ու մածուն կերցնե։

Կարելի է նույնն անել՝ ասելով .

- Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ։

Երեխաները բաժանվելով խմբերի, ներկայացնում են այս ծիսական խաղերից փոքրիկ հատվածներ։

Այնուհետ դաստիրակը երեխաների և մեծերի հետ կազմակերպում է ձվակռիվ։ Նրանց բաժանում մեկական ներկած ձու և բացատրում խաղի կանոնները։

Դաստիրակ

- Երեխանե՛ր ձուկուտոցին խաղում են զույգերով։ Մրցակիցներից յուրաքանցյուրը խաշած, չկոտրված ձու պետք է ունենա։ Խաղացողներից մեկը ձուն պահում է ափի մեջ՝ բութ մատի և ցուցամատի օղակմամբ, չծածկելով ձվի քիթը, իսկ մյուսը պետք է աշխատի իր ձվի քթով հարվածել խաղընկերոջ ափի մեջ բռնած ձվի քթին այնպես, որ դիմացինի ձուն կոտրվի։ Որից հետո « կռվեցնում» են ձվի բութ քթերը։Սկզբում մրցում են զույգերով՝ յուրաքանչյուրն իր կողքի ընկերոջ հետ։ Այնուհետև հաղթողները խաղում են զույգերով՝ մինչև մնա մեկը և ճանաչվի հաղթող։

Միջոցառման վերջնակետը դառնում է հայկական ժողովրդական շուրջպար, որին մեծ խանդավառությամբ , մասնակցեցին, թե՛ մեծերը, թե՛ փոքրերը։

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի արդյունքում եկա մի շարք եզրահանգումների.

1. Որ ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունը՝ դա ազգային մշակույթի յուրացումն է, երաժշտական ճաշակի զարգացումն է, ազգային ծիսական խաղերի ծանոթացումն է, գիտելիքների, կարողությունների և մի շարք հմտությունների ձեեքբերումն է , գեղարվեստական խոսքի մշակում, թատերական տաղանդի բացահայտումն է:
2. Առանձնահատուկ կարևորությունը այն միասնական գործողություններն են, որոնք համախմբում են մեծերին և փոքրերին, իրենց գաղափարները և մտքերը արտահայտելու գործում:
3. Տոների և ծիսակատարությունների կազմակերպման ընթացքում կարևոր ձեռքբերումներից մեկն էլ այն է մ որ երեխան դառնում է ավելի ազատ, անկազկանդ ձերբազատվում է բարդույթներից:

Գրականության ցանկ

1. « Հայ ժողովրդական տոներ» Հ. Խառատյան - Առաքելյան
2. « Զատիկ » Ռ. Հարոյան
3. Գիտամեթոդական հանդես « Նախաշավիղ»1. 2013
4. Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր Հ.Միտոյան
5. Qahana.am